ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 216 - Ա

«ՎԱՐԴԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՈՒԱՋ ՄԱԿՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 103,290,000 դրամ արժողությամբ «ՈՒԱՋ մակնիշի ավտոմեքենաների և գյուղատնտեսական սարքերի նվիրաբերում» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 02269952) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են «ՈՒԱՋ մակնիշի ավտոմեքենաների և գյուղատնտեսական սարքերի նվիրաբերում» ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Կարկոմավտո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00059627) 2025 թվականի մարտի 7-ին կնքված՝ N 060325 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի արտադրության ՈՒԱՋ մակնիշի ավտոմեքենաների (12 հատ) ձեռքբերում՝

99,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մոտոբլոկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 05205808) 2025 թվականի մարտի 7-ին կնքված՝ N ՎԸ-009/2025 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սրսկման սարքերի (3 հատ թևերով և 3 հատ տուրբո քամիարով) ձեռքբերում՝ 3,690,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

07.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ